

ՊԱՇՏՈՆ**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ****ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ****ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ****ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ****ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ**

Պրոդուկտների համակարգող

Լրիվ դրույք

ք. Երևան, ՀՀ

Հնարավորինս շուտ

01/06/2022թ.

Անորոշ՝ 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն Պրոդուկտների համակարգողի հաստիքը զբաղեցնելու համար փնտրում է փորձառու, մոտիվացված և հմուտ թեկնածուի, ով պատասխանատու է ստորև նշված պարտականությունները կատարելու համար

Աշխատանքային պարտականություններ

- Պրոդուկտների համակարգողին կցված պրոդուկտների զարգացման քաղաքականության և նպատակների ապահովում,
- Պրոդուկտների համակարգողին կցված պրոդուկտների հետստուգման իրականացում, պրոդուկտի կենսացիկլի կառավարում, արդյունքների վերաբերյալ պարբերական տեղեկատվության տրամադրում անմիջական ղեկավարին,
- Արտաքին և ներքին փոփոխությունների ուսումնասիրություն, հետադարձ կապի հավաքագրում վաճառք իրականացնող աշխատակիցներից, դրանց վերլուծություն և անհրաժեշտության դեպքում փոփոխությունների առաջարկների ներկայացում,
- Միջազգային գործընկերների հետ նոր նախագծերի իրականացման մասով բանակցությունների վարում (այդ թվում միջազգային վճարահաշվարկային համակարգերի),
- Իրականացվող փոփոխությունների արդյունավետության գնահատման իրականացում,
- Իրեն կցված պրոդուկտների մշակման, ներդրման և զարգացմանն ուղղված միջոցառումների կառավարում,
- Բիզնես առաջարկների պատրաստում և դրանց ներկայացում Բանկի համապատասխան կառավարման մարմիններին,
- Մանրածախ պրոդուկտների հետ առնչվող գործառնությունների շրջանակներում գործող բիզնես-պրոցեսների քարտեզների մշակում (Process mapping),
- Մանրածախ բիզնեսի տնօրինության գործառնությունների շրջանակներում գործող բիզնես-պրոցեսների քարտեզի հիման վրա առկա խնդիրների բացահայտում, օպտիմալացման առաջարկների ներկայացում,
- Բանկի ներքին իրավական ակտերի համապատասխանեցում ՀՀ օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված փոփոխություններին,
- Գործող բիզնես-պրոցեսների օպտիմալացմանն, այդ թվում դրանց հնարավոր ավտոմատացման հետ կապված բիզնես առաջարկների ներկայացում,
- Ներքին դասընթացների և սեմինարների վարում ըստ անհրաժեշտության,
- Պրոդուկտների համակարգողին կցված պրոդուկտների մշակման, ներդրման և զարգացմանն ուղղված միջոցառումների կոորդինացում:

Պահանջվող որակավորումներ

- Բարձրագույն կրթություն,
- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ համապատասխան ոլորտում,
- Բանկային պրոդուկտների և ծառայությունների գերազանց իմացություն,
- Բանկային գործի իմացություն,

- Նախագծերի կառավարման մեթոդների, միջազգային կանոնների իմացություն,
- Լեզուների իմացություն - հայերեն, ռուսերեն լեզուների իմացություն (գերազանց), անգլերեն (լավ),
- MS Office ծրագրային փաթեթի լավ իմացություն,
- Ճշտապահություն և պատասխանատվության գգացում,
- Կազմակերպչական հմտություններ և ժամանակի արդյունավետ կառավարում,
- Խնդիրների արագ և արդյունավետ արձագանքման կարողություն,
- Միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն,
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն,
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն,
- Ներկայացման հմտություն,
- Համագործակցելու ունակություն,
- Մանրութների նկատմամբ ուշադրություն / լարված գրաֆիկով աշխատելու ունակություն:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարզևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և Դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴԻ Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴԻ Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴԻ Բանկ» անվանումով: ԱյԴԻ Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը <https://www.idbank.am/>: